

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ

(1872-1954)

ԲԱՆԱՍՏԵԼՆՈՒԹԻՒՆԸ

Զօպանեանի զրական կեանքը բազմա-
ղիմի մտահոգութիւններու, տքնաջան աշ-
խատանքներու մէջ սպառած է: Բանա-
ստեղծութիւնը անցողակի աշխատանք մը՝
անոր կեանքին մէկ համառօտ շրջանը կը
ներկայացնէ մեզի, և իրտասարդութիւնը
և հասունութեան քանի մը տարիները
միայն:

Առաջին հատորները կզան Արշալոյսի
ձայներ (1891) տասնեակ մը կտորներով,
Թրքառումներ (1892) երկտասնեակ մը ու-
տանաւորներով, և Քերթնաւածներ (1908),
ուր կրկնուած են նախընթաց հատորնե-
րուն նիւթերը լայն յաւելումներով նոր
բանաստեղծութիւններու, և Հայրենի քը-
նարի (1925) քանի մը հայրենասիրական
երգերով:

1950ին նոր հրատարակութեամբ մըն
ալ ասպարէզ եկաւ: Հատորը հրատարակ-
ուած է Փարիզ՝ Բանաստեղծութիւններ
խորագրով, ուր դասաւորումի նորութիւն
մը կայ միայն, նիւթերը դրեթէ նոյնները
մնալով, և ուր «Քերթնաւածներ» հատորին
լեզուական վերամշակումը և ընդհանուր
դասաւորումը պահպանուած է, թեթեւ
փոփոխութիւններով: Եթեանասունամեայ
արեւոր դարգէտը այս նոր հրատարակու-
թեամբ զոհացում կու տար իր սրտին՝ որ
այնքան կը սիրէր կոչուիլ «աղգային բա-
նաստեղծ»: Եւ ստուգիւ, եթէ Փրանսա-
կան մամուլին մէջ իր բանաստեղծու-
թեանց «La Vie et le Rêve» տիտղոս-
ով Փրանսերէն հրատարակութեան և
ուրիշ գործերու առթիւ ևրեւցած քննական
և պարագայական տեսութիւնները նկատի

առնելու ըլլանք, զրուած նոյնիսկ Փրան-
սացի և պելճիկացի ակնաւոր գէմքե-
րէ՝ (1) պէտք ենք զինքը մեր մեծագոյն
բանաստեղծը համարիլ: Իսկոյն, սակայն,
յայտնի կ'ըլլայ չափազանցութիւնը Փրան-
սական մամուլին և պատշաճութեան խոս-
քերուն ներքին խմատը՝ և որ անաչառօրէն
քննութեան կ'առնուի անոր բանաստեղ-
ծութիւններուն իսկական արժէքը:

Բանաստեղծութիւնները իր ներքին ևն-
թաբաթանով՝ կը կրեն հետեւեալ մասե-
րու խորագրերն, որոնք քիչ մը տարբե-
րութեամբ կային արդէն «Քերթնաւածներ»
հատորին մէջ. ա) Արշալոյս (ուր կ'ամ-
փոփոխուի Երգեր գրուած 1889-90-91),
բ) Ժամերուն կարաւանը, (Կ. Պոլիս 1892-
1893), գ) Ծովուն մօտ (Կ. Պոլիս 1893),
դ) Անկուքիւն (Կ. Պոլիս 1893), ե) Փըշ-
րուած սիրտ մը եղբերգը (Կ. Պոլիս
1893), զ) Խաւարին մէջ (Փարիզ 1904 -
1906), ի) Բլուրին վրայ (Փարիզ 1907-
1909), և Քերթնաւածներ: Մաս մը իր եր-
գերէն Տէրփիշ ծածկանունով երեւցած ևն
«Անահիտ»ին մէջ:

Բանաստեղծական ներաշխարհը Ա. Զօ-
պանեանի՝ չունի լայն հորիզոններ: Գրել-
խաւոր լարը՝ սիրտ լարն է, և զուցէ իր
լաւագոյն կտորներն ալ սիրայիններն են,
զրուած և իրտասարդական աւելումով, յու-
զումով, և մերթ ալ տառապանքով՝ որ
սէրը կը ծնանի անոր հողոյն խորը:
Արշալոյս և Ժամերուն կարաւանը շարքե-
րուն մէջ է որ կը գտնենք զանոնք ընդ-
հանրապէս: Այսպէս «Սիրտ ճիւղ», «Իմ
նախանձ», «Բարեկենդան», «Բայց»,

«Երգ», «Նայուածք», «Երգեցի», «Ե-
ղերեղ», «Յայրերգ», և ամբողջ տաղա-
շարքը «Փշրուած սիրտ մը եղերեղ»ին,
և «Լուսինն հետ քմանուազը», ևն., ու-
րոնց մօքիւնները և պատկերները առնը-
ւած՝ բնութենէն, ծաղիկներէն, սիւզէն,
արշալոյսի վառ գոյներէն՝ իր սիրտը եր-
գին կու տան բնականութիւն և թարմու-
թիւն: Այս սիրայիններուն վրայ կը զգաց-
ուի յաճախ աղբեղութիւնը Հայնէին, աղ-
գային կամ օտար աշուղային երգերուն,
բայց մեծ մասով անձնական են: - Բնու-
թեան նուիրուած երգերը և հողեկան աղ-
բեղները արձանագրող էջերը կը կազմեն
ուրիշ խումբ մը իր բանաստեղծութեանց,
բայց ասոնք չունին շունչի թարմութիւնը,
հարազատ բուղիւքը, բնական ու ժայթ-
քուն՝ ինչպէս իր սիրայինները: Ասոնք
զրուած ևն, որովհետեւ բանաստեղծը ու-
ղած է գրել և ընդլայնել իր խոկումները,
զանք է գրել և ընդլայնել իր խոկումները,
արդիւնք ընթերցումներու կամ պարզա-
յական տպաւորութիւններու՝ եկած դուր-
սէն:

Ուժեղ երեւակայութեան մը փաստը
զանեւ գծուած է Զօպանեանի բովանդակ
տեղեղծութիւններուն մէջ: «Անդուն-
դի ձայնը», ուր կարծես քիչ մը մտածու-
թիւն, արտայայտութեան կորով ու սաստ-
կութիւն կայ, օտար աղբեղութեան մը վե-
րադրելու է և շատ հաւանաբար Հիւկո-
յէն առնուած ներշնչումի մը. այդ երգը
յէն առնուած ներշնչումի մը. այդ երգը
յէն առնուած ներշնչումի մէջ՝ Զօպանեանի
միակը իր տեսակին մէջ՝ Զօպանեանի
խառնուածքին հետ շատ չի հաշտուիլ ար-
դէն:

Իմաստասիրական խորք, կեանքի ա-
ռեղծութիւն վերլուծումը կը կազմեն նիւ-
թերը իր կարգ մը ուրիշ երգերուն: Բայց
հոս ալ թերի է զաղապարաբանութիւնը
իւր իմաստասիրական տեսութիւն: Մեռ-
նիլ բանաստեղծութեան մէջ (նուիրուած
Նիլային 1891ին), հակառակ անոր անէ-
ութեան անբնականոն երազին՝ մահով
կտրելու ցաւին արմատներն ու անցելու
Նիլովանայի յաւերժական երջանկութեան
ծոցը, երիտասարդ Զօպանեան կը զգայ
բովանդակ քաղցրութիւնը կեանքին, թըր-

թրոսցումը բնական զգացումին, որով
մարդ կը սիրէ սպրիլը, և վայելքը սիրոյ
և բնութեան գեղեցկութիւններուն: Բա-
նաստեղծը կ'երգէ կեանքը, կ'երգէ նիւթը,
աշխարհը և բազմազանութիւնը կեանքի
երեւոյթներուն, և չի կրնար համակեր-
պիլ որ մահով ամէն ինչ վերջանայ: Կը
հաւատայ թէ «փայտացած ու սառուցիկ
մարմինին մէջ» կը մնայ սպրիլը ու սի-
րելու տենչանքը: Բայց այդ անմահու-
թիւնը, ճամարիտ հողեկան կեանքի ան-
մահութիւնը չէ. ըստ իրեն անմահութիւ-
նը կը կայանայ ծնունդներու յաջորդա-
կանութեան մէջ հողեկան ձիրքերու վե-
րածաղկումով մը որդի է որդի, և կամ
մտքի ու հողիի ստեղծագործութիւննե-
րուն մէջ՝ որ կ'աւանդուին յաջորդ սե-
րունդներու:

Ա. Զօպանեան տարուած է Փրանսա-
կան բանապաշտ կամ դրապաշտ իմաստա-
սիրութեան հոսանքէն: Անաթօլ Ֆրանսի
աղատախոհական գաղափարներէն: Ան-
տարբեր է հաւատքի ու կրօնքի հարցե-
րուն մէջ, նոյնիսկ անաստեղծ մը, թէ և
միշտ միակերպ չի յայտնուիլ: Չ'ընդու-
նիր բնութենէն անջատ Աստուծոյ մը դո-
յութիւնը, Աստուած մը ստեղծիչ տիեզեր-
քին, վարձատրող ու պատուհասող: Կը
հաւատայ, ընդհակառակն, անյայտ Ու-
ժին, ճակատագրին, Դիպուածին, որուն
ծնունդն է արդէն աշխարհը, և որուն մէկ
քմալքովը պիտի լուծուին տարբերը:
Կեանքը չունի նպատակ, ամէն ինչ սուտ
է, և չկայ տիեզերքին մէջ էակ մը որ
գայն գիտնայ (տե՛ս Սփինքս, Երջանկու-
թիւնը), այլ ամէն ինչ խաղալիք է ճա-
կատագրին կամ Դիպուածին ձեռքը: Այս
գաղափարը կը գտնենք արդէն երիտա-
սարդ Զօպանեանի քով (տե՛ս Արշալոյսի
ձայներ հատորին «Փայտէ մարդեր» ար-
ձակը), ուր կը վարդապետէ թէ անձանթ
գորութիւն մը կը խաղցնէ մարդն ալ՝ շատ
աւելի տխուր տեսարաններու մէջ, շատ
աւելի դառնալուր երաժշտութեամբ մը,
ահեղ մեքենագործ մը՝ որուն կրնաք տալ
ինչ անուն որ կ'ուզէ՝ ճակատագիր,

(1) Օտար մամուլին գնահատական այդ արտայայտու-
թիւնները ամփոփուած են բանաստեղծին յօդուած-

նին ակթի Զ. Սիվաճեանէ «Archag. Tchobanian par J. Sivadjian».

